Մերկեզեր քրդ. կը նշանակէ դեղին մարդեր, արդար և գարնան ամբողջ մարդերն դեղնագոյն ծաղիկներով կը զարդարուին, կարծես լեռ ու ձոր և ամեն վայր դեղնագոյն ներկուած է։

Որպէս ասացինք, Մերկեզեր կը նշանակէ դեղնագոյն մարդ կամ Ոսկեմարդ, որ կայ Զամչա լերան հարաւն Վարդէհօր վանքէն 2 ժամ հարաւ շղթայի միւս երեսի վերան, որ ձորահովիտներով և բարձր լեռներով շրջապատած ընդարձակ և խորանդունդ ձորեր ունի. այս վայրն մերձ է Վարդէհօր և կարծեմ Բագրեւանդայ Աշոտ իշխանը Վարդէհօր վանքին նուիրած Ոսկոյն գիւղն Մերկեզեր լինելու է որ և դիրքն ևս յարմարութիւն ունի և մօտ է վանքին. տարւոյն վեց ամիսն ձեան կոյտերով պաշարուած վանքն կարելի էր միայն Մերկեզերի հետ յարաբերութիւն ունենալ. կամ Ոսկոյն լինելու է Ամատայ բարձունքը գտնուած Ոսկեհող կոչուած վայրն, որ վանքին նուիրուելու արժանաւորութիւն չունի։

Այժմ Մերկեզեր 17 գիւղ կը պարունակէ, ամենն ևս Զիլանցոց ցեղին յատուկ քրդեր, որք վերջին պատերազմէն յետոյ այս տեղ հաւաքուած են այժմեան բնակչաց $^3/_4$ը։

Այս ցեղին գլխաւորն է Սելիմ բէկ, որ միւտիւր էր և կը կառավարէր այս վայրը, իսկ այժմ նա Համիտիէ զօրքի փաշայ լինելով՝ գրաւած է Ամատ գիւղի հայերու կալուածներն և այն տեղ հաստատուած կը կառավարէ իւր ժողովուրդն։

Պարսից քանակն Բագրեւանդ մտնելու համար Սուկաւէտի մօտերից յարաբերութիւն չկայ, այլ Արարատեան կողմից Աղթայով ամենայարմար ճանապարհն է որ Կողբայ կողմից կը բարձրանայ։